

Գ Ր Ա Խ Ո Ս Ա Կ Ա Ն

Դ-ր Ս. Տեր-Ավետիսյան, «Նադիր-շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու)», Արմֆանի հրատարակություն, 1940 թ.

Գրքույկի վերնագրից կարելի է ենթադրել, որ հեղինակը նպատակ է դրել Հակոբ Շամախեցու հիշատակարանների հիման վրա կազմել Նադիր-շահի արշավանքների պատմությունը, սակայն կարգավով այս գրքույկը, դուք պարզ գաղափար չեք կազմում այդ շրջանի դեպքերի և պատմական անձնավորությունների մասին: Այստեղ մենք կարևոր ենք համարում առանձնապես կանգ առնել այն հարցի վրա, թե որքան ճշգրիտ և հարուղատորեն են վերարտադրված այս գրքույկում Հակոբ Շամախեցու ձեռագիր հիշատակարանները:

Պետք է նկատել, որ հեղինակը բավարար բարեխղճությամբ չի վերաբերվել ձեռագիր-հիշատակարանների հրատարակությանը: Բերենք մի քանի օրինակներ:

Գրքույկի 2-րդ հավելվածը հանված է մատենադարանի № 2911 ձեռագիր ժողովածուից: Պետք է ասել, որ այս ժողովածուն գրված է շատ վատ ձեռագրով և վատ թղթի վրա, բայց այնուամենայնիվ ընթեռնելի ձեռագիր է: Սակայն դ-ր Տեր-Ավետիսյանը շատ հեշտ է լուծել խնդիրը: Այնտեղ, որտեղ հարկավոր էր ջանք թափել կարգավոր և ճշտությամբ արտագրելու համար, նա կետեր է դրել և անցել, իսկ որոշ տեղերում ձեռագրի շատ նախադասություններ և երբեմն ամբողջ պարբերություններ բաց է թողել, սակայն առանց կետեր նշանակելու:

1. Այսպես օրինակ՝ ուղևոր կայսրուհի Ելիզավետա Պետրովնային ուղղած գրություն մեջ (հավելված 2-րդ, էջ 51) «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակովբ, որ և շնորհիւն նորա կաթողիկոս» բառերից հետո ամբողջ շարունակությունը, մոտավորապես 15 տող, բաց է թողել, որովհետև այս մասերը մի քիչ դժվար են կարդացվում: Սրա հետևանքով ստացվել է մի բոլորովին անկապ և անհասկանալի գրություն, որ է՝ «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակովբ, որ և շնորհիւն նորա կաթողիկոս... Առ յարմատոց բարեաց...» (տես էջ 51) և այլն և այլն: Թե ինչի մասին է թուղթը և ինչպես է սկսվում, մնում է անհասկանալի:

Եթե այս դեպքում հրատարակիչը կարող է ինքնաբերաբան համար ասել, թե ավելորդ է համարել մեջ բերել այդ երկաթ կտորը և այդ պատճառով բաց է թողել ու կետեր նշանակել, ապա թղթի վերջին մասը բաց է թողել առանց կետեր նշանակելու, իսկ վերջին տողը, որ է «գրեցաք ի ՌԴԹ թուականիս մերում», անհասկանալի պատճառով տպագրություն

մեջ դուրս է եկել՝ «Դրեցաւ ի ՌՄԹ ԹՎին ի յուլիս» (էջ 53). «ԹՎին» (այն էլ Վով) և «ի յուլիս» բառերը ձեռագրում բոլորովին բացակայում են:

2. Ծիշտ չենք համարում նաև ավելորդ ուղղումները: Եթե հրատարակիչը սխալ է համարում այս կամ այն բառը կամ արտահայտութիւնը և ուզում է անպայման ուղղված հրատարակել տեքստը, ապա նա, ինչպես ընդունված է որպես կանոն, անպայման պետք է նշի ձեռագրի սխալ ձևը, կամ, հակառակ դեպքում, չպետք է ուղղի և նոր բառ ավելացնի: Այստեղ ուղղված ձևերը մեծ մասամբ կամայական են և բոլորովին սխալ:

Օրինակ. բնագրի «յուսարով յամենակարօղն աստուած և ապաւինելով յողորմածութիւն գերափառութեանդ ձերոց վասն օգնականութեանս¹ ի ձէնջ խնդրելոյ» նախադասութիւնը, որը միանգամայն ճիշտ է և օրինական, ուղղել է. «յուսարով յամենակարօղն աստուած և ապաւինելով յողորմածութիւն գերափառութեանդ ձերոց վասն օգնականութեանս ի ձէնջ խնդրելոյ» (էջ 52) սխալ ձևով: Հրատարակիչն իմանալով, որ «վասն» նախադրութիւնը պահանջում է սեռական հոլովով խնդիր, չի իմացել սակայն, որ «վասն» նախադրութեան խնդիրը «օգնականութիւնս» բառը չէ, այլ «խնդրելոյ» բառն է և որ «օգնականութիւնս» բառը հայցական հոլովով է դրված որպես «խնդրելոյ» ներդործական սեռի դերբայի ուղիղ խնդիր:

3. Տեքստում գրված է, թե Թահմազ-Ղուլի խանը գրավեց շատ քաղաքներ. դրանց թվում հիշված է նաև Շամախին: «Շամախի» բառին հաջորդում է մի նախադասութիւն, որը ձեռագրում առկա է փակագծերի մեջ և գրված է հետևյալ ձևով. «Ձոր գկնի առնլոյն հրամայեաց տեղափոխել զգովելի քաղաքն այն ի յԱղսու կոչեցեալն տեղ վատաօք, զոր և փոխեցին իսկ»: Հրատարակիչը, չիմանալով որ «առնում» բայի «առնլոյն» ձևը (որ նշանակում է առնել, գրավել) անորոշ դերբայի (առնալ) սեռական հոլովն է, փոխել է «առնելոյն» ձևով, որ «առնեմ» բայի (նշանակում է անել, կատարել, ստեղծել) անորոշ դերբայի (առնել) սեռական հոլովն է. ստացվել է մի բոլորովին անիմաստ բան, այն է՝ «զոր գկնի, առնելոյն հրամայեաց տեղափոխել զգովելի քաղաքն այն ի յԱղսու կոչեցեալն» (այն) հողը բաց է թողած) տեղ վատաօք (ձեռագրում՝ «վատաօք», որը, հավանորեն, պիտի լինի «վատաօղ» ք, զոր և փոխեցին իսկ) (էջ 45):

4. Ձեռագրում գրված է. «Նաև պարտիք յաւուրս Մուհառումին զգէմս ձեր ոչ ցտել և ոչ արիւնեցուցանել սակս Հասանին և Հուսէյինին վասն զի յաղազս այնց հայոյանացն մեծ խռովութիւնք լինին, և գերութիւնք և արեանց հեղմունք ի մէջ երկուց ազգացս, որք եմք Ղուրանին ընդունողք և մահմետականք»:

Այս ամբողջ պարբերութիւնը հրատարակիչը փոխել է և նախադասութեան մի մասը, այն է՝ «վասն զի յաղազս այնց հայոյանացն մեծ խռովութիւնք լինին» — հանել է իր տեղից և դրել մի ուրիշ տեղ, որից ստացվել է հետևյալ անհասկանալի պարբերութիւնը. «Նաև պարտիք յաւուրս Մուհառումին զգէմս ձեր ոչ ցտել և ոչ արիւնեցուցանել սակս Հասան (ձեռագրում՝ Հասանին) և Հուսէյինին, և գերութիւնք և արեանց հեղմունք ի մէջ երկուց ազգացս՝ վասն զի յաղազս այնց հայոյանացն մեծ խռովութիւնք

¹ Այս և հետագա ընդգծումները մերն են: Վ.

լինին որք եմք Դուրանին ընդունողք և մահմեդականք (ձեռագրում՝ տ-ով) (էջ 49):

5. Գրքում երբեմն պատահում են այնպիսի սխալներ, որ չենք իմանում ինչնով բացատրել: Օրինակ. ձեռագրում գրված է. «զնա բերեալ կացուցէք ձեզ տէր և թագաւոր», որ նշանակում է՝ «նրան բերեք դարձրեք ձեզ համար տեր և թագավոր», տպագրության մեջ դուրս է եկել՝ «զնա բերեալ կացուցէք զձեզ տէր և թագաւոր»: Դժվար է հասկանալ, թե ում պիտի թագավոր դարձնեն ում վրա:

Մի ուրիշը:

Ձեռագրերում ըստ և ընդ նախդիրները սովորաբար կրճատ են գրվում, բայց կրճատումն այնպես է կատարվում, որ այդ երկու նախդիրները տարբերվում են միմյանցից, իսկ եթե չտարբերվեն էլ, տեքստում ամեն մեկի տեղը հասկացվում է իր իմաստից: Հրատարակիչն այդ անտես է առել. այսպես՝ ձեռագրում գրված է. «յորոյ վերայ շինել հրամայեաց խարտեցեալ քարիւք զշինուած ինչ, ըստ (կրճատ գրված) ձեռյ վրանին իւրոյ»: Այս նշանակում է՝ «հրամայեց դրա վրա խարտած քարերով շինք շինել համաձայն յուր վրանի ձևի»: Այս նախադասությունը տպված է՝ «յորոյ վերայ շինել հրամայեաց խարտեցեալ քարիւք զշինուած ինչ ընդ ձեռյ վրանին իւրոյ» (էջ 43), որ կարող է կամ նշանակել՝ «յուր վրանի ձևի հետ», կամ «յուր վրանի ձևի փոխարեն»: Երկու դեպքում էլ ստացվում են անիմաստ և անմիտ բաներ:

6. Այսպիսի «ուղղումների» կողքին մենք գտնում ենք նաև բազմաթիվ սխալ ընթերցվածներ, բացթողումներ և տառասխալներ: Հիշենք դրանցից մի քանիսը: «Կամիմ գալ յԻւջքիլիսեայն», տպված է՝ «Կամիմ գալ յԻւջքիլիսէ այն» (էջ 38):

«Գայ... Աբդուլլահ փաշայն հարիւր հազարօք զօրօք և բանակէ» — տպված է՝ «... գայ ... և բնակէ»:

«Զայն» — տպված է՝ «զայ», «յայտնիցի» — տպված է՝ «յայտնեցի», «զանօթան» — տպված է՝ «զաղօթողան» (տես էջ 49, 52 և այլն). «մեծադոյն» — «մեծագին». «որ էր օր ԻԲ. սեպտեմբերի ամսոյ» ուղղված է «որ էր ի ԻԲ. սեպտեմբերի ամսոյ»:

Հիշենք մի քանի բացթողումներ և տառասխալներ, որոնցով լիքն է մի քանի էջանոց տեքստը. բայց չմոռանանք ասել մի ավելի անակնկալ բան ևս: Ձեռագրում գրված է. «Ես ամենատարտամ և մշտապղբառ առ զործս բարիս Յակովբ անպիտան և անարդիւն վարդապետս Շամախեցի քաղցրաճաշակ խորտկալի սեղանս այս և զհոգեկեցոյց մատեանս... ի վաղուց հետէ սկսեալ յայսմ ամի զբաւեցի...» և այլն:

Այս նախադասության մեջ 3 սխալ է արված. 1) «առ զործս» կապակցությունը դարձրել է «զառ զործս», որ անիմաստ է, իհարկե. 2) զբաւեցի բայը գրել է զբաւիցի, որպիսի բայ չկա հայերենում և 3) ամենածիծաղելին, «խորտկալի սեղանս» ուղղել է «խորտակելի սեղանս» ձևով, ըստ երևույթին խորտկալի բառը համարել է անհասկանալի. իսկ թե ինչ է նշանակում «խորտակելի սեղան» արտահայտությունը, այդ իհարկե հրատարակչի գիտնալիքն է (տես էջ 27, ծանոթություն):

Հիշենք նաև բաց թողած բառերը. «Անապատաց» (չի կարողացել կարգալ). «Արքայն Վրաց Թէմուրազ (հանդերձ հարազատիւ և որդւոյն իւրով) Հերակլիւ և ալլն». փակագծում գրված բառերը բաց են թողված և «որդւոյն իւրով» բառերը, որ կապված են «Հերակլիւ» անվան հետ, դուրս են մնացել և արտահայտութիւնը դարձել է անիմաստ: «Հանդերձ քաղաքօք» և հետո «գաւառօք», որ բաց է թողված: Զարուհնակենք, որովհետև այգալիսիները բազմաթիւ են տպագրութեան մեջ: Հիշենք միայն մի քանի ուղղագրական սխալներ. օրինակ՝ սոյնպես, վասնորոյ (պիտի գրել աւանձին), հաղթահարին (ձեռագրում յաղթահարին), մինչև (պիտի գրել մինչ չև), մեծով, աստանոր (պիտի լինի աստանօր), ժտիմք (ձեռագրում ժտեմք), այնդ (ձեռագրում այնց), մինչև յիններորդ (ձեռագրում մինչև ցիններորդ, որ ճիշտ է): Կան նաև ձևեր, որոնք ձեռագրում սխալ ձևով են գրված, բայց տպագրութեան մեջ չեն հիշված. պարտիք (ձեռագրում պարտի. սխալ է), ըն նմա (ձեռագրում ընդ նմայ. «ընդը» կրճատ գրված), ապա (ձեռագրում ապայ. երկու ձևն էլ ընդհանրապես գործածական է), արժանւոյն (ձեռագրում արժանոյն. բայց սրան հակառակ ձեռագրում օսմանցոց ճիշտ ձևը տպագրութեան մեջ դառել է օսմանցոց, կամ ձեռագրում զոսկեթել (ճիշտ) ձևը տպագրութեան մեջ դարձել է զոսկեթել, խորհեցէք (ձեռագրում խորհեցեք), պիտի մնար ձեռագրի ընթերցվածը. լինել ձեռագրում լինիլ, և ալլն, և ալլն:

Գուցե սրանք էլ ոչ թե ուղղումներ են, այլ պատահականութիւններ, որովհետև այգալիսիներն ևս շատ ենք նկատում. օրինակ՝ տպագրութեան մեջ «և», իսկ ձեռագրում՝ «ևս» (ճիշտ), «խորհուրդ»—ձեռագրում՝ «խորհուրդս» (ճիշտ), «յայգիս» ձեռագրում՝ «յայգին» (ճիշտ), «ոտս» ձեռագրում «զոտս» (էջ 55), և ալլն և ալլն: Ծիշտ ասելով մենք հասկանում ենք ընդհանուր կոնտեքստի մեջ:

Պետք է նկատել, որ այսպիսի աշխատութիւնները, որոնք հրատարակվում են որպես «աղբյուրներ», չեն կարող հավաստի աղբյուր ծառայել ոչ մի ժամանակաշրջանի պատմութեան համար: Պատմութեան համար աղբյուր ծառայող նյութերը պիտի հրատարակվեն խնամքով, մանրակրկիտ ճշտութեամբ և հոգատարութեամբ:

Վարպ